

այս վիճակը շուտով փոփոխութեան պէտք ունի մա-
նաւանդ. Լոյսիպոսի մէջ 'ի ժամանակիս յայտնի, յո-
րում Դուէզի պարանոցին բացուելը ու եւրոպական
վաճառականութեան զարդացումը փոխակերպելու վե-
րայ են զլիշեալ երկիրը :

Երբ Խնդիրը պաշտօնեայն, յանուն կառավարու-
թեան պատասխանելով ըսաւ, թէ քանի մը տարիէ
'ի վեր Լոյսիպոսի փոխարեայն իւր պահանջումը
յայտնած է այս խնդրոյն նկատմամբ, և արդէն հա-
մաձայնութիւն մի հաստատուեցաւ Խնդիրին կառա-
վարութեան և Լնդդիոյ դահլճին մէջ միջնորդութիւն
վսեմա. 'Կուպար փաշային և որպէսզի խորհրդակցու-
թիւն մի լինի 'ի վերայ նոր բարեկարգութեանց զորս
կըպահանջէր դատաստանական դրութիւնը Լոյսիպոսի
մէջ: Վաղդիւն իւր հաճութիւնը տալով այս խոր-
հրդակցութեանը, քննութեան մասնաժողով մի դու-
մարուեցաւ 'ի Վահիթէ 1869ին, իմանալու համար
եւրոպական դաշնացի դրութեան (սխիթմ) յառաջ
եկած եղելութիւնները և փնտրելու նոր բարեկար-
գութեանց հարկաւորութեանը վրայօք վիճաբանելու
համար: Եւս մասնաժողովը բաղկացեալ էր 'ի 'Կու-
պար փաշայէ, որ Խնդիրին արտաքին գործոց պաշ-
տօնեան է, յընդհանուր հիւպատոսաց Լեստրիոյ,
հիւսիսային դերմանական դաշնակցութեան, Լմերի-
կայի Միացեալ—'Կահանգաց, յերկուց գործակալաց
վասն Վաղդիւն, վասն Լնդդիոյ, Խաւիթի և Խուսիւյ:
Մասնաժողովը իմացաւ պիտաւորութիւնը եղիպտա-
կան կառավարութեան առ 'ի հիմնագրեւ խառն դա-
տաստանարաններ, որք բաղկացեալ պիտի լինին երկ-
րացի և օտարազգի դատաւորներէ: Եւս դիտաւո-
րութիւնը հաւնուեցաւ և որոշուեցաւ Վաղդիւն կառա-
վարութեանը յանձնել օրինադրքի մի (քօմ) խմբա-
դրութիւնը ըստ սկզբանց զորս ընդունած էր մասնա-
ժողովը: Օրինադրքը շինուեցաւ և ընդունուեցաւ
Լնդդիոյ կառավարութեան 'ի Մայիսի 1870 ամին:
ուստի կըմնար Բարձրագոյն 'Գրան' մատուցանել
զայն և անոր հաւանութիւնը ինդրել Լոյսիպոսի
դատաստանական բարեկարգութեան նկատմամբ,
երբ պատերազմը ծագեցաւ 'ի մէջ Վաղդիւն և Բու-
սիոյ: Եւս ժամանակէն Բարձրագոյն Վուրը պաշ-
տօնապէս յայտնեց անցեալ Մայիս ամսոյն մէջ թէ
ինքը կըպատրաստէ բոլոր կայսերութեան համար օ-
րինադրք մի, որ վեց ամսուան մէջ պիտի լըննայ:
Հարկ է, ուրեմն, սպասել և տեսնել այս օրինա-
դրքը՝ իմանալու համար օսմանեան կառավարութե-
դիտումը և թէ ինչպէս համաձայնեալ է վեհապետ
տէրութեան՝ այսինքն Բարձրագոյն Վրան իրաւունքը
ընդ երաշխաւորութեանց՝ զորս եւրոպական տէրու-
թիւնները պիտի պահանջեն 'ի փոխարէն վաղեմի ար-
տօնութեանց զորս պատրաստ են թող տալու:

Դուք մարդկային ընկերակալութեան ծովիւններն էք, և
որ աւելին է, դուք երկրաւոր նախախնամութիւններն էք
զուք գործակալէք վերին Կախախնամութեան:

Ահաբեւտ հարկ կայ ուրեմն ձեր վրայ, որ ապագայ
սերունդը աստուածագիծ ունէր մէջ ընթացէք, նորա
հոգին դէպ 'ի միակ ճշմարտութիւնն՝ առ Աստուած կա-
րապետէք: Մանաւանդ դուք, բարեպաշտ մայրեր,
պէտք է որ ձեր կաթին հետ Աւետարանի կենսատի-
պատուէրներն և անմահարար ճշմարտութիւններն ջառ-
բէք ձեր որդւոց և նոցա սրտին մէջ անջինջ զրուսէք:
Աստուծոյ սուրբ կամքը. պէտք է որ նոցա հոգւոյն խորը
այն բարոյական ոյժը զարթոյցանէք, այն կենսանորոգ
սկզբունքներն անեղծ քանդակէք, որով միայն կարող
կըլինի մարդ ճշմարտապէս ապրել աշխարհիս վրայ:
Քանզի դուք էք նոցա զայնակը, նոցա անմեկին կենա-
կիցը մինչ 'ի նոցա պատանեկութիւն թեւակոխելն:

Երբ մանուկն յաշխարհ կուգայ, ամենէն առաջ ձեր
գորգուրացող բաղուններն իւր ապրիարութեան օգնե-
լու պատրաստ կըգտնայ: Առաջին անգամ նորա տկա-
րութիւնը դարմանելու համար իրեն հպող ձեռքերն
ձերն են: Այո՛ ձեր ձեռաց շօշափումն է, որ կըզգայ նա
զոյգ ընդ լուսոյ: Դուք էք որ նորա ճիչն ու աղաղակը
կըլռեցնէք, նորա հանգստութեան համար ձեր քունն ու
հանգստութիւնն անձնութեանը կըզոյճէք առանց սրտ-
նեղութեան, և ձեր կաթին ջամբմամբն ու զիւցմամբ
զայն կըտածէք և կըզարգացնէք: Բայց այս ամենը
մայրական դորո՞ւն խանդաղատանայ արգասիքն է մի-
այն, որ գրեթէ ամեն կենդանեաց հասարակէ:

Սակայն, բարեպաշտ մայրեր, դուք պէտք է որ այս
քայլով բաւականանաք, զի քսով ձեր պարտքը կատար-

'Կախորդ Լոյսիպոս Մահմետ 'Կէտիմփաշան հե-
տեալ շրջաբերականը յուղարկած է նահանգական
կառավարաց և կառավարչաց:

'Կահանգաց զանազան ատեաններուն մէջ դատ-
ուած գործքերը՝ Լոյսիպոսի պաշտօնատան քննու-
թեանը կընեկայացունին, որ իւր վերջնական որոշու-
մը կուտայ: Եւս բանէն կըհետեւի որ Տիվանի թէմէյիզ
(բողոքոյ ատեան) անունը, որով կընշանակէին մինչև
յայսօր նահանգական ինչ ինչ ատեաններ, անտե-
ղի է:

Լոյսիպոսի բարձրագոյն ատեանները՝ որ հա-
մաժողովքին դատաստանական բարեկարգութեանց,
հաստատուեցան մտերի Սեյանիկի, Լմասիայի և Սը-
վազի մէջ, պիտի կոչուին Մուհաքէմէի Մէրքէզիէ,
այսինքն կիւրոնական դատաստանատեան: Իսկ փոքրիկ
վիճակաց մէջ գտնուած քաղաքական ատեանները
յետ այսօրիկ պիտի կոչուին Տապի Մէճլիսի:

'Կահանգի մը մայրաքաղաքին մէջ հաստատուած
քաղաքական ատեանը պիտի կոչուի տիվանի—վիլայէ-
թի—տապի:

Ընուն այս փոփոխութիւնները կայսերական հրո-
վարտակաւ որոշուեցան:

Ինչպէս իւր—ախըր, 1289.

(Ստորագրեալ: ՄԷՀՄԱՌՏ 'ՆԼՏԻՍ)

ԱԶԳԱՅԻՆ

Յուլիս 16 կիրակէ օրը Լ. 'Կ. Դահնազարեան
վարժարանի ուսմանց տարեկան հանգիսը կատարուե-
ցաւ ի ներկայութեան բաղկած խումբի հանդիսականաց,
որք կըբաղկանային աշակերտաց ծնողքներէն, կղեր-
ականներէն և ուրիշ հրաւիրեալազգայիններէ: Հան-
դիսն սկսաւ վեհա. Սուլթանին Ս. Պատրիարքի և
վսեմա. 'Կուպար փաշայի համար բարեմաղթական եր-
գերով վսեմա. 'Կուպար փաշան և Ս. Պատրիարքն
հանդէսին ներկայ չիկարեալ գտնուելուն ցա-
ւերին յայտնած էին նամակաւ հանդիսականաց,
Լնդդիւններէն մի քանին դաշնակ զարկին մի քանին
ալ տարբաբանական գեղեցիկ փորձեր ըրին: Եւս
կերտներէն Ս. Յ. Թաւաճեան Տաճկերէն լեզուա-
վեհա. Սուլթանին և Ս. Սողոմոնեան ալ Ս. Պատ-
րիարքին բարեմաղթութիւններ ըրին: Եւս վերջը
Իփէքճեան էֆէնտի վարժարանին տնօրէնը դպրո-
ցական տարւոյն տեղեկագիրը կարդաց: Էջտոյ Լու-
սուֆեան էֆէնտի խնամակալութեան կողմանէ Հայ-
երէն և Վաղդիւններէն ճառեր կարդաց առաւել վար-
ժարանին տրուած նոր ու գործնական ուղղութիւնը
խմացնելու համար:

Յետոյ աշակերտաց անունները կարդացուելով ի-

րած չէք լինիր: Ձեր առաջին պարտքն է մարմնին հետ
հոգին ալ պարարտել, քանզի ձեր տնտեսութեան և խը-
նամոց յանձնուած արարածները լոկ շնչաւոր չեն այլ հո-
գեւոր: Միակողմանի աճու մեծ մահ կենթադրէ, վասնզի
ինչպէս որ միակէ Թաւաճեան անկարող կըլինի Թաւիլ,
նոյնպէս նաև մարդն անկարող է որ լոկ մարմնաւոր զար-
գացմամբ կարող լինի զվեհեալ նախապիտին հասնել,
որ է Աստուածանմանութիւն: Դուք պէտք է որ երախտ-
յի սուրբ բերին մէջ ամէն բանէ առաջ դերագոյն Լին
սուրբ անունը զնէք, և կրթէք նորա գերաթէք լեզուն:
որ առաջին անգամ իւր Սրտաշին անունն՝ Աստուած
թողով և արտաբերէ որբութեան և անմեղութեան
զգացումներով:

Բարեպաշտ ծնողքներ, դուք որ յաստուածուստ կար-
գեալ մարդկային ապագայ սերնդոց տնտեսն ու դաստի-
րակն էք, յերկուց Տեսուն սնուցէք զանոնք, բանդի ըս-
կիզբն իմաստութեան երկուց Տեսուն է, և ջանացէք աս-
տուածաշաշտութեամբ, հեղութեամբ և ամէն ստարիմու-
թեամբ օժտել ու բարգաւաճել կենդանի օրինակ տալով
նոցա ձեր անարատ վարքն ու կեանքը. վսեմի երբ երա-
խան աչքը բանայ, իւր տեսութեան առաջին անգամ
ենթարկուող իրերը շորս պատ և նորա մէջ գտնուած ա-
ռարկաներն են ահա՛ այդ ստանալու փակ և հունաւոր վա-
րճն է մարդկութեան բովը. այս անդորտ աշխարհիս մէջ
այդ փորձիկ սենեակն է երախտային աշխարհը: Նա իւր
պալատին, այն է, որբանին բարձունքին՝ սուր ու հետա-
քննին ակամբ իւր ծնողաց իւրաքանչիւր վարմունքը,
մէն մի շարժումներն ու հոնգամները մանրազնին կերպիւ
կըզիտէ, և զանոնք այնպէս կըտպաւորէ իւր սրտին խո-
րը, որ այլևս չըսեմ անկարելի, այլ խիստ դժուարին է

լեւնց տրուեցան սոյն աստեական հանդէսին յիշատակն
եղող զբերը:

Լոյսիպոսի պէյն ալ որ հանդիսին ներկայ էր Վաղ-
դիւններն լեզուաւ տնտեսարանեց և հանդէսը զոյուե-
ցաւ Լոյսիպոսի եպիսկոպոսի ատենաբանութեամբը ու
օրհնութեամբը:

Չիմոռնաք յիշել թէ սրահին երկու ծայրեր մէջ
մէկ հեռագրական գործիքներ դրուած ըլլալով երկու
աշակերտք հեռագրով հանդիսականները ողջունեցին
որու փոխարէն Լոյսիպոսի պէյն ալ զարձեալ հեռա-
գրով «կեցցէ Հայ ազգը» պատասխանեց: Ետեանալ
նութիւններն ու փորձերն երգերով ընդ միջեալ
էին: Պարտեզին մէջ աշակերտք մարմնամարզութեան
փորձեր ալ ըրին: Հանգիսի միջոցին հանդիսականաց
տաքը մեղմացնելու համար օշարակներ ալ բաժ-
նուեցան:

ՄԱՆՁՈՒՄԷ

Լոյսիպոսի անուն ընդհանուր ժողովը երէկ այս-
ինքն ամսոյս 14ին մեծագոյն մասամբ նիստ ընելով
հետեալ արգիւնքն ունեցաւ:

Ա. Իւսկիւսարի Լեւոնիմահալէի արժանապատի-
ւէր խորէն քահանայ փէհլիվանեան թաղին վար-
ժարանին մէջ դատաստութեան ամենօրեայ պաշտօն
յանձն առած լինելով՝ երեսփոխանութեան պաշտօ-
նէն հրաժարական տուած էր: Ժողովը չընդունեց
այս հրաժարականը, և Ս. Պատրիարք Հօր յանձ-
նեց որ Լեւոնիմահալէի Թաղական խորհրդոյն դրէ,
որպէսզի արժանապատիւ փէհլիվանեան հօր թոյլ
տրուի երկու շաբաթ անգամ մի ընդհանուր ժողո-
վոյ ներկայ գտնուիլ:

Բ. Լեւոնիմահալէի էֆէնտին կարդաց Վաղաքական
ժողովոյ անդամոց ընտրութեան տեղեկագիրն: Ժողո-
վըն փաձայն հաւանութեամբ ընդունեց ու վաւե-
րացոյց ընտրութեան արգիւնքն և հետեւաբար Ս. Պա-
տրիարք Հօր յանձնեց որ Վաղաքական ժողովոյ նոր
ընտր անգամ մեծապատիւ էֆէնտիներուն պէտք է
ղած հրաւիրագիրն ուղղէ և գործել սկսին:

Գ. Լոյսիպոսի անուն ընդհանուր ժողովը ընդունեց
զաքական ժողովոյ անդամոց մէկ իրիւթն հրաժարական
տուած են, թէ և յատենի Լնդհանուր ժողովոյ հրա-
ժարականի դիր երեան չեւաւ, յանձնարարութիւն է
ղաւ Ս. Պատրիարք Հօր որ յորդորէ և համոզէ եթէ
հրաժարող գտնուի, ինչպէս ասկէ յառաջ յաճող
է յորդորաւոր համոզել ո՛ր միայն մէկ քանի հրաժա-
րողներ, այլ նախորդ քաղաքական ժողովը՝ որ խը-
բովին կըհրաժարէր ամենայն հաստատանութեամբ
յայտարարութիւն ընելով թէ անհնար է վերադա-
նել:

Իրաւ է որ Լոյսիպոսի անուն ընդունեց հրաժա-
րականները անմիջապէս ընդունելու սկզբունք մի կայ:

Ճնշել: Ինչպէս որ իսկ հայկի ենթակայ է իրեն ներկա
յայտուած մարմիններուն ճիշտ գծագիրը լուսոյ անդրա-
դարձմամբ իւր մէջ կերպաւորելու, եթէ չեմ՝ սխալի:
նոյն պէս ալ որ իսկ երախտայ ընդունակ է զգայարանայ
միջնորդութեամբ իւր սրտին խորը ճիշդ ու անջինջ քան-
դակել նորա տեսութեան ներկայացուած կենաց և շարժ-
մանց մէջ մի փոփոխութեան ու հանգամանքը և վարույ
ճիշդ ընդօրինակութիւնը: Սրով բանիւ նորա սիրա-
բարեբեղուն դաշտի մը նմանութիւնն ունի, յորում ինչ
որ զգայարանայ միջոցաւ սերմանուի, նոյնը կըբեղմնա-
ւորէ, և կըպտուղաբերէ: Ասոր ճշմարտութիւնը Յիսուս
իւր անսուտ բանիւ կըհաստատէ «Գոր ինչ սերմանէ՞ ո՞ր
զնոյն և հնձէ՞» եթէ բարի և եթէ չար: Մեծ յիմարու-
թիւն է ուրեմն վարսակ ցանել, և ցորեան սպասել:

Օր ըստ օրէ կ'աճի երախտն և կըզարգանայ, բայց
կաճին նորա հասակին հետ իւր սրտին մէջ ցանուած
սերմունքն ալ, և տակաւ առ տակաւ կըծաղկին և կը
պտուղաբերին, ուստի կըմակարբերուի նորա դաստիարա-
կին վարույ ու բարույ որակութիւնը:

Ուրեմն, ծնողքներ, մի տրտնջաք երբէք ձեր որդւոց
անառակութեան վրայ, տրտնջացէ՛ք ձեր վրայ, որ նո-
ցա բարի օրինակ չեւաք. ծնեցէ՛ք ձեր կուրծքը, որ հո-
գի մը սպանեցիք, յաւիտենապէս կորուսիք զայն: Ինչ
միտիթար լացէ՛ք. որ աշխարհս աղետաբեր բեռով մը
ծանրաբեռնեցիք. ընկերակալութեան փոխանակ վարդ
մի ընծայելու, փուշ և տառասկ մատուցիք. փոխանակ
մարդկութեան դեղձով և ընձեռելու, բարոյականութեան
ժանտախտ պտղաբերեցիք:

Պէտք է քաջ զխնաք, որ ծնողական պարտաւորու-
թեանց տառաջինն է բարի օրինակ լինիլ իւրեանց որդւոց:

բայց այս սկզբունքը չեմք կրնար գործադրել Քաղաքական ժողովոյ անդամ՝ ընտրուած անձանց համար, որովհետեւ ամենուն գործը չէ այս պաշտօնը վարել, և հետեւաբար արժանաւորաց յորդոր կարգաւ պէտք է Օրինակի համար կ'ընենք թէ Գարակեօզեան մեծապետիւ Վարապետ էֆէնտին պիտի հրաժարի, պէտք է անմիջապէս ընդունիլ սորա հրաժարականը։ Ս. Պատրիարք Զօր կըմնայ որ ըստ յանձնարարութեան ընդհանուր ժողովոյ համոզէ Նորին մեծապետութեան թիւնը, որպէսզի ժամանակ մի շաբաթը մէկ քանի ժամ ալ ազգային գործերով զբաղի։ Այսպէս համազեւ պէտք է, եթէ ուրիշ հրաժարողալ գտնուի, որ չեմք յուսար։

- Դ. Բնագիտութեան ժողովոյ գիւնարին ընտրութիւնն եղաւ քուէարկութեամբ և ատենապետ ընտրուեցան
1. Գրիգոր Էֆէնտի Օտեան
 2. Հարութիւն Կ Տատեան
 3. Օգսէն Կ խօսաւարեան
- Ատենադպիր ընտրուեցան
1. Տիգրան Էֆէնտի Եղսուֆեան
 2. Պօղոս Կ Պառնասեան
 3. Միքայէլ Կ Սամիկոնեան
- Այս ընտրութիւնն ըլլալէն յետոյ՝ գոցուեցաւ ատենան ժամը տասնուկէսին ատենները։

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ազգի մը ապագան հիմնովը, նոյնպէս ազգի մը ապագան կործանողը դպրոցն է, ասիկա անձխտելի ճշմարտութիւն մ'է։ Եւ ինչ է դպրոցը. — բայց եթէ մարդկութիւնը աղիւստացնելու, վեհացնելու, ճոխացնելու և անոր իր պարտաւորութեանց ծանօթացնելու միակ շարժառիթը։ Այս նպատակով վարժարան կը հիմնեն և այս նպատակով անոր ընթացքը յարատեւելու կը դնեն։

Այլ սակայն վարժարանը սոյն նպատակներու յարմարացնելու համար անհրաժեշտ հարկաւ որ և նաեւ տնօրինել այն ամեն կարգադրութիւնները՝ որք վարժարանին արդիւնաւորութեան շարժառիթներն են։ Այսինքն վարժարանին ծախսը գոյցող դու մարի մը անհրաժեշտ ապա, հովիւը, գործունեայ և բանիւրուն դասատուաց քաջ ընտրութիւն մը, բեղմնաւոր կանոնադրութեան մը անթերի գործադրութիւն և որ ամենէն նշանաւորն է, դպրոցին ներքին կառավարութեանց և ի պահանջել հարկին նոր դասադրութեան կարգելու, ապարդիւն վարժապետներ արտաքսելու, կանոնադրութեանց ամեն մէկ կէտերու գործադրութեանց համար նախաձեռնելու, բանիւրուն, կենցաղազէտ և ազգասէր անձ մը տնտես և վարիչ կարգուի վարժարանին նկատմամբ ինչ որ անհրաժեշտ և օգտակար է գործադրելու և տնօրինելու լիակատար

հեղինակ լինել նոյա ատարիւնութեան, քանզի ոչ որ կարող է մանկանց լաւագոյն աւանդել բարոյց ուսումը քան զայն որ նորա սննդարանն է։ Մարդու առարկութեան առաջին վարժապետն իւր ծնողքն է։ Վասն զի բանաւոր էակ մը իւր բովանդակ կենաց մէջ կատարելու գործողութիւններն ընտանեաց մէջէն կը սկսի, և որոյ ատարիւնութեան առաջին ասպարէզն իւր հայրենի տունն է։ Եւ այս սրտին խորը կըտպաւորի առարկութիւնը, երբ նորա ջերմ կնիքը ծնողական սէրն է, կըսէ Թեոփիլոս, և թէ նորա աւելի բարի օրինակով կը կրթուին քան թէ բարի խրատութեամբ։ Գրովհետեւ առարկաներն աւելի աւելաց կազդեն քան թէ ականջաց։ Լոկ խրատները թէ՛ ուղեցիկներ են, որոնք աշխարհիս վրայ հիմունք չունին։ Այլ յողովող միջնորդութիւն մէջ կը ծնան ու կը ծածանին։ Իսկ ընդհանրականը՝ վարույն օրինակը ապառաժի վրայ հիմնուած չէ։ Ոչ մի պատուէր, ոչ մի ուսումն, ոչ մի օրէնք այնպէս չեն տպաւորիր, ինչպէս ծնողական օրինակը։ Անոնք որ գործող կաւանդուին՝ աչքով կը տարբերին և սրտին մէջ կը զրոյն։ Մի բնական օրէնք է այս։

Ուրեմն, բարեպաշտ ծնողք, ծերերէն աւելի ձեր որդիներէն պատկառեցէ՛ք, խորհեցէ՛ք նոյա առջև ունեւորութեան հայրը սատանան է։ Երկուզ զգացէ՛ք այդ անմեղ հոգիները ճշմարտութեան շուղէն զատելու վատ սովորութիւնէն, մէկ խօսքով զգուշացէ՛ք զանոնք գայթակղեցնելէ, զի այս իսկ է Աւետարանի պատուէրն։ «Ո՛վ որ այս մանուկներէն մին իմ անուամբ կընդունի, կըսէ Յիսուս, զիս կընդունի և ո՛վ որ զիս կընդունի, իմ առաքիչը կընդունի»։ Իսկ ընդհանրական, ո՛վ որ ինձ հաւատաւորը այս փորձիւններէն մէկը գայթակղեցնէ, աւելի լաւ է որ այնպիսի մարդուն վրէժն քար կախուէր, և ծովը ձգուէր, զերեզմանի անգամ չարժանաշարժ։

(Մնացորդը յաջորդ քուով։)

Իշխանութեամբ։ Այս տեսուչը չէ թէ այս ինչ ազգային կամ այն ինչ Էֆէնտիներ, բայց արտօնութիւններ տալու կամ անոնց քմայահամաձայն շարժելու պարտաւոր ըլլայ՝ հապա իր վարժարանին նկատմամբ ընդհանուր գործոց ցուցակը Քաղաքական ժողովոյ կամ ազգային Վարչութիւնը ներկայացնող անձանց տայ։

Տեսնենք թէ Մեսրոպեան վարժարանը սոյն թիւնութիւնները կը ներկայացնէ։

Նախ՝ իր տարեկան ծախսը գոյցող գումարը ապահովուած չէ, և ինչո՞ւ, միթէ երկդեղեղն յատկապէս կըլուծուածոց այնչափ ընդարձակ եկամուտները չեն բաւեր դպրոցի մը ծախսը գոյցելու, այո՛, կըրտէ, և չէ թէ միայն Մեսրոպեան վարժարանին՝ հապա նաեւ քանի մը դպրոցներու։ Այլ ցաւալի կէտը այն է որ անցեալ վարչական ժողովները անչափ շուտաւարժեամբ նոյն գումարները գրեթէ ոչինչ բաներու վատնելէ յետոյ եկեղեցւոյն ստացուածներն ալ վտանգի ենթարկեցին ազգ. պարտուց ահագին բեռ մը թողով իրենց յաջորդաց։ Այնպէս որ ներկայ և անցեալ քանի մը տարուան վարչական ժողովները զբաւմանալով այնպիսի տաղանդներու հանդիպեցան՝ որ վարժապետաց ամաւորները երբեմնակի վճարելու տնկարող գտնուելով ցաւ ի սիրտ քանի մը անգամ վարժապետաց կողմէ դպրոցը գոյցելու սպառնալիքներ կրեցին, և զորս անհետեցին իրենց անխնայ և յարստեւ գործունէութեամբ և ազգասիրութեամբ։ Հետեւաբար անցեղոյն մէջ եղած սխալումները ներկային դժարադրութեան պատճառ եղան։ Եւ այսպէս ներկայ վարչութիւնը երբեք պատասխանատու չէ սոյն մասին։

Երկրորդ. Ունի՞ գործունեայ և բանիւրուն դասատուներ։ Այս մասին անաշտապակ խօսելու համար կըսենք այո՛ և ո՛չ։ Ունի այնպիսիներ՝ որոնց յաջողակութիւնը և տաղանդը ի վաղուց փորձուած է։ Ունի նաեւ այնպիսիներ՝ որք իրենց վարժապետական կոչումին յարմար յատկութիւնները չ'ունենալով՝ չէ թէ միայն ապարգիւն և ամուլ աշխատութիւն մը ունին՝ այլ նաեւ պարզապէս ազգային արկղին բեռներն, այլ այս ալ խոստովանինք որ այս անպատեհութիւնը աւելի նւթական օժանդակութեան անհաստատութեան արդիւնքն է։

Երրորդ. իր տեսուչը ունի՞ այն ամեն յատկութիւնները որ դպրոցը բարեկարգօրէն և արդիւնաւոր կերպով վարելու կարող ըլլայ։

Այո՛, և ասիկա անձխտելի է։ Վասնզի մեծապատիւ Մ. Մամուրեանի տաղանդը, արժանիքը, և յաջողակութիւնը հանրաճանօթ է։ Այլ միայն ասոնք չեն բաւեր իրեն։ Նոյնի այն ապատեհութիւնը և օժանդակութիւնը որ դպրոցին ներկայ անգուցացուցիչ ընթացքը ուսմանց աւանդումներու ձեւը փոխելու և զայն իր նախկին փառաց հասցնելու անհրաժեշտ են, այն փառաց, սոյն վեհ համալսարան՝ որու վրայ ընկած մինչև Հնդկաստանէ Պարսկաստանէ և ուրիշ հեռաւոր երկիրներէ ուսանողներ կը գիւնին։

Խօսինք մասնաւոր դէպքի մը վրայ՝ որ Զմիռնիոյ Հայ երիտասարդաց բուսական խօսակցութեան նիւթ եղաւ և որոնցմէ ոմանք ի նպաստ և ոմանք հակառակ խօսելով բաւական վրդովեցին հասարակութիւնը։

Սրոց թարգմանչաց տեսակետութեան օրը Մեսրոպեան վարժարանը յանուն նոյն երանելի որոց իր սովորական ազգային հանգէտը կատարեց։ Սոյն հանդիսին սկիզբները պարագային յարմար քանի մը ձևեր կարգացուցեալ և հոսկ յետոյ Պ. Ս. Կարապետեան բեմը կըսէ ձառ մը խօսելու։ Այս պատմակին հազիւ 13—14 տարեկան է իր խելքը և գաղափարները իր շարունակ թողուած թողուցիկին նման միշտ իր գլուխը վեր օդին մէջ կը շարժուի, ասիկա իր անփորձաւորութեամբ և յախուղուն յանձնապատասխանութեամբ սխալ դպրոցին ներքին վարչութեան վրայ խօսիլ, իր թէ յառաջադիմութիւն չ'կար, և թէ անհոգութիւնը ազգին կողմէ ծայրացել էր և անշուշտ այս անել լափարիւնդուն էր մը գտնուելու

ՄԻՋՈՑ պիտի առաջակէր մեր անձուռի փաստաբանը՝ եթէ դպրոցին ընդհանուր տեսուչը պատուած համարէր անոր օժիթէն բռնելով վար առնելու և իր չափազանց ձաւարտակութիւններու վերջ տալու։ Այս պատմակին զոր փողի մէջ Սրամ և անհոգուն յեղափոխական անուանած է, և զոր աւելի պատուած կը համարենք խոռովարարայ անմիտ գործիք կոչել, միմիայն ազգին բարեաց նախաձեռնողի կեղծաւոր որ և զայն ոտնհար ընելու աշխատող խոռովարար երիտասարդներէ թեղադրուած և անոնց իւրաքանչիւրն ուղեղին թափթփուքով իր խելքին վիժած երկը ձեւակերպած է, զոր աւելի երեւակայական զառանցումներու յիշատակագիր անուանել պէտք է քան թէ դպրոցական հանդիսի յատուկ ձառն մը կարեւորութիւն տալ անոր։

Այլ մեղ դարմանալի թուած կէտը այն է որ ինչո՞ւ մեր ճատախօս աշակերտը իր անձին վրայ դարձուցած չէ իր քննադատութիւնը։ Տասնեւերեք տասնչորս տարեկան հասակի մէջ ուր դեռ գաղափարները մտրին մէջ կազմաւորած չեն ըլլար, և որու գատողութիւնը գլխովին տրամաբանութենէ և պատճառաբանելու յաջողակութենէ զուրկ ըլլայ։ Ինչպէս կարող եղած է ճառ մը յորինել և զայն հասարակութեան կարգաւոր համարձակութիւնը ունենալ։ Միթէ եթէ ասիկա իր մտաց երկնէ չ'վկայէ՞ր հակառակ իր ատենաբանութեան խնամունք, իր յառաջադիմութիւնը, զոր անշուշտ դպրոցին պարտաւոր է։ Իսկ եթէ ուրիշներ թելադրուած կամ ձեւակերպած դրութիւն մ'էր այն՝ այն տեսն հասարակութեան կը թողունք դատել թէ նոյն պատմական արժանիքը և թէ անոր ձառն կամ խելքին կարեւորութիւնը, վասնզի դպրոցին ներկայ թշնամիներու կողմէ պարզապէս մոլորին մէջ յարձակում մ'էր այն։

Ամենք կը գոռան թէ դպրոցը պէտք է աւելի բարեկարգել, աւելի յառաջանել, ինչո՞ւ այս կերպ կը խօսին, վասնզի կը տեսնեն որ ուրիշ դպրոցներ կը յառաջանան և ընտիր արդիւնքներ կարաւորեն։ Լաւ, այսպէս է, բայց մտածէ՞ք թէ մեր դպրոցը նոյն դպրոցներու բաղադրութիւնը ունեցած է, թէ միապետական բացարձակ դրութիւնը՝ որ այս տեսակ հաստատութիւններու զարգացման ամենէն պիտաւոր շարժառիթն է, մեր դպրոցին մէջ կ'այ։ Ամեն որ կը խօսի, ամեն որ կը ձեռն ուղծին պէս, բայց մի գոռաք, մի գոչէք, գոռու մ'ը դռն մով ձեր նպատակին չ'պիտի հասնէք երբեք, հապա ձեռք ձեռքի տալով աշխատեցէ՛ք դարման տանելու իրաց վիճակին քանի որ կը փափաքէք աւելի ընտիր սերունդ պատրաստել ազգին։ Եթէ ոչ այդ ընթացքով աւելի անմոռելի ներկ կը յայտնէք քան թէ ազգասիրութիւնն իր։

ԱՅԴ

Վիճակահանութիւն (Լ. Թաւրիա)

Գործարանի մը՝ բաւական մաքրելու եւ կոտորելու համար քէ շոգիով եւ քէ ջրով, եւ որ իրեն վերաբերեալ ամեն հարկաւոր գործիքը աւելի։ Այս վիճակահանութիւնը բաղկացեալ է 2730 տոմսակներէ, որոց իւրաքանչիւրոյն արժեքը մէկ օսմանեան լիւրս։

Յիշեալ գործարանը (Ֆապրիքա), որ Տի Ագիա Միգոր կոչուած բաւական ընկերութեան կը վերաբերի, Գարաբուհարի բով Ալլակեօգ բնութեւն տեղը կը գտնուի, եւ ունի։

1. Ջրով մեծ հոսանք մի, որ կը շարժի 34 ջրբերք մէկ մամուլ եւ երկու զոյգ աղալու բար։

2. Բառասուն մատնաբալի երկայնութեամբ 24 ջրբերք՝ իւր անոն երեւելի վարպետէն շինուած։

3. Մէկ շոգեշարժ դիւրաբարձ մեքենայ, որ 12 ձիու ուժ ունի։

4. Մէկ հոքիգոնական տեսակ մի ձախարակ՝ քիւրպին կոչուած, 12 ձիու ուժով, հանդերձ իրեն վերաբերեալ գործիքներով։

5. Առանցք, ձախարակները, կաշիէ կապեր եւ այլն, 28 ջրբերքի համար են։

6. Երկու կատարեալ զոյգ գաղղիական բարեր՝ աղալու համար։

7. Մէկ ջրաբաշխական (խորոյք) մամուլ, 8 զլան (քիլիմետր) սնտուկով ու ջրհանով (բաւարմալայով) մի։

8. Երկարագործի մը վերաբերեալ ամեն գործիք։

9. Մէկ երկայնակ քարաշէն սենեակ՝ բաւական մաքրելու, գրասենեակ մի, մեծ սրահ մի, ճեղքու սենեակներ, ախոռներ, ալիւրի ջնոցաց, մեքենա գործաց սենեակ, խոհանոց, վալրագուրի եւ այլն։

10. Չորս շտեմարաններ, ապրանք պահելու։

Այս գործարանը իւր դիմացը ունի մասն գետին մի, ուր երկու սրճարաններ կան։

Եթէ այսօրուան միջոցէ՛ք 3—4 ամիս, վիճակահանութեան ամեն տոմսակները ջնմ ձախարակ եւ արժան կը համարուի ջնջել զայն, ձախարակ տոմսակաց արժեքը լման եւ անմիջապէս ետ պիտի տրուի ի գրասենեակն վերոյիշեալ ընկերութեան։ Իսկ եթէ ամեն տոմսակները ձախարակով գործը յառաջ երթայ, ըստ ժամանակին յուր պիտի տրուի՝ հասարակութեան բնոր օրը եւ ուրտեղ պիտի քաշուի յօրաբիւրն։

Յիշեալ գործարանին մանրամասնաբար գծագրեալ մէկ գաղափարը կը գտնուի Տի Ագիա Միգոր ընկերութեան գրաստանը, ուր ուզողը կրնայ տեսնել։

